ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Դեկտեմբերի 12-ին. Թիֆլիս. №50.

ՑՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԴԱԲԱՐՁԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ




Հները դուրս են գալիս, նորերը մտնում են.

Худож.-Лит. С. Быховa, Тифлисъ.

[illegible]

## ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
## 1910 թ.

# 5 ԽԱԹԱԲԱԼԱ 5
ՏԱՐԻ ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն միակ գունաւոր պատկերազարդ հայ շաբաթաթերթն է:
«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է ռուսական եւ եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով:

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն շարունակւում է նոյն ուղղութեամբ, նոյն արտիստների եւ զբաղէտ երգիծաբանների մասնակցութեամբ, ինչպէս եւ անցեալ տարիները:

**ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ**

**ԳՐԻՉՆ ՈՒ ԹՈՒՆԱՔԸ ՆԵՐԿՆ ՈՒ ՀԱՆԱՔԸ**

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ՊԱԿԱՍ ՎՃԱՐՈՎ

## „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը, որն առայժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ, կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ, իսկ ապագայում ամեն օր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան | 5 րուբլի |
| Կէս տարին | 3 ր. |
| Երեք ամիսը | 1 ր. 50կ. |
| Թիֆլիզում տարեկան | 4 րուբլի |

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան | 7 րուբլի |
| Կէս տարին | 4 ր. » » |
| Երեք ամիսը | 2 ր. 25 կ. |
| Ամիսը | 75 կ |

**«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԵՒ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ» ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ**

| | |
|---|---|
| Տարեկան | 10 րուբլի |
| Կէս տարին | 6 ր. |
| Երեք ամիսը | 3 ր. 50 կ. |
| Մէկ ամիսը | 1 ր. 20 կ. |

Հասցէն Тифлисъ. Редакція „Хатабала“. Հեռագրով Тифлисъ „Хатабала“
Արտասահմանից Tiflis Gaucas Redaction «Khatabala»


Որովհետեւ մեր բաժանորդները մեզ շատ են սիրում, իսկ մենք էլ նրանց աւելի շատ՝ քան թէ նրանք կարծում են, ուստի այս շաբաթ էլ ուղարկում ենք նրանց բաժանորդագնի փոխադրական բլանկներ «Խաթաբալա» և «Սուրհանդակ» թերթերի համար։

Խնդրում ենք բաժանորդագրուել, իսկ եթէ արդէն բաժանորդագրուել են՝ այդ դէպքում այս բլանկը տան իրենց ամենամտերիմ բարեկամին, որպէս ամենալաւ ընծայ առաջիկայ տօներին եւ խորհուրդ տան սրանց, որ անպատճառ բաժանորդագրուեն։

**ԻՆՏԵՐՎԻՒ**

## Մակար Զմշկեանին

## (ՕԲՍԵՐՎԱՏՕՐԻԱՅՈՒՄ)

Հալլէյ մոլորակի ու աշխարհիս վերջի մասին։

Եղանակների անասելի և անօրինակ խռովութիւնների պատճառով, այլև այն բոլոր ալեկոծութիւնների առթիւ, որ վերջերս խօսեցան. թէ Հալլէյ մոլորակի մասին և թէ աշխարհիս վախճանի առթիւ, ես բարւոք համարեցի պ. Գասպար Կալատուզեանի հետ միասին, անցեալ օրը գնալ յայտնի ու հռչակաւոր Մակար Զմշկեանի տունը ու նրան խնդրելու տալ մեզ հետաքրքրող հարցերի համար։

Մեր գնալուն բոլորովին չէր սպասում պ. Մակար Զմշկեանը և հենց որ զանգահարեցինք՝ դուրս եկաւ պատշգամբ՝ նա ինքը, հռչակաւոր աստղագէտը և ուրախ—ուրախ մեզ ներս հրաւիրեց։

Տեսակցութիւնը այնչափ անասելի ու ուրախ էր, որ նա ներքնազգեստով էր մինչև վերջը։

Շնորհակալ ենք, պ. Մակար Զմշկեանը մեզ շատ լաւ ընդունեց, նա թէև զբաղուած էր լօբի եփելով և բողկ ու համեմեղէն խա-

տակելով, սակայն հենց որ մեզ ընդունեց, աւելի ուշադրութիւն դարձրեց իր արդ ու զարդի, իր բեխերի ֆիքսատուարի վրայ և երբ իմացաւ որ մենք կարևոր գործով ենք եկել իրան հետ խորհրդակցելու, իսկոյն առաջնորդեց մեզ իր տան տանիքը և այնտեղից էլ բուխարու գլուխը, անձամբ դիտելու այն ամենը, ինչ որ կատարւում է տիեզերքում։

Գիշերը գեղեցիկ էր, աստղերը պայղում էին, լուսինը այնպէս էր դեղնել, ու կարմրել, կարծէք թէ մի մեծ թիթեղ, կամ տաքացրած ու թէժացրած մատուցարան՝ կամ մուրաբի թաս լինէր։

—Ա՜յ, էն լուսինն է, կօսէ, էն էլ Հրատը, էն որ լաւ է պայղում՝ նա Մարսն է, էն մէկէլը ծիղծիղ վուր անում է, նա էլ Աստղիկն է, բացատրում էր պ. Մակար Զմշկեանը։

—Էդ վո՞ւր Աստղիկը, իմ դէյդի ախչի՞կը, թէ միր խեղճ Տէր-Սիմօնի, հարցրեց պ. Գասպար Կալատուզեանը։

—Վունց նա, վունց նա. դա աստղ է ու նրանք կի ախչիկեք ին, պատասխանեց պ. Զմշկեանը։

—Հիմի վո՞ւնց պիտի ըլի աշխրքի վիրջը, կրկին հարց տւեց պ. Գասպարը։

—Շատ պարզ, դուք խօ տեհնում իք, թէ էն աստղը վունց է ծղծղում, էն մէկէլն էլ իրան հանգչում, իրան վառւում, էտ դրամէն է վուր... ա՛յ, ա՛յ, ա՛յ. տեհնա՞ք, տեհնա՞ք վունց մէ աստղ գիլիլը նրնգաւ...

—Վունց չէ, տեհայ, ասաց Կալատուզեանը։

—Ա՜յ նա, նա, գիդիք ի՞նչ էլաւ, մէ աշխարք քանդուից։

—Է՞, ինչ իք հրամանք անում, պարոն Մակար, դա նշան է, վուր մէ մարթ կու մեռնէր։

—Չէ, էն վաղ էր, վուր կար, հիմի էլ մարթիք չին մեռնում, իփ վուր աստղիրը գիլիր ին նրնգնում, հիմի աշխարքնիր ին քանդւում։

—Վա՜, դուրթ իք հրամանք անում։

—Բու արիւը գիդենայ։

—Էն Հալլէյը վուրն է, վուր դուգէ աշխարքս քանդէ ու բաթմիշ անէ։

—Նա՜... նա՜... ա՛յ, ա՛յ, ա՛յ, տեհնում իք, էն վուր վաղէվաղ գալիս է. վա՛հ, վա՛հ, վա՛հ, մէ հետի է շտապում. կօսիս դէպիշով կանչած ըլինի։

—Վո՞ւրդի է, չիմ տեհնում։

—Ա՜յ, ա՛յ, մէ լաւ մտիկ տու Է. էլի չիս տեհնում, վիկալ մէ էս սամովրի տրուբուբը մտիկ տու, ուփրօ լաւ կու էրևայ։

—Արա մէ տու ես էլ տեհնեմ, վա՛հ, վա՛հ... վա՛հ... ի՞նչ... լաւ... բանիր է... էրեւում է՜... համա պարոն Մակար, էտի օչով չէ գալիս։

Վունց թէ չէ գալիս, արա էլի լաւ մտիկ արա։

—Հալբաթա աչքս չի կտրում, վունչինչ չիմ տեհնում։ Էն լուսինը խիստ է կարմրի։

—Թասիաթը փոխիլ է, ցօցիալ է դառի։

—Ղուրթ իս հրամանք անում։

—Էն լօբու բարաքէն գիդենայ։

—Հիմի աշխարքս վուր մօշլա ըլի, վունց կուլի։

—Էտի ինչ կայ արմանքի բան. էն Հալլէյը վուր գալիս է, միր երկիրն էլ գընում է—համ էլ հարրած մարթու հանգի իրան իրան պտուտ է գալի։

—Վա՛, դո՞ւրթ իս հրամանք անում։

—Իժում վուր էտ թասուր սա էսղանց ու նա էլ էնդանց վազում ին, հալբաթա մէկ մէկու տասո դուքան Է՞լի, ու թէ տասո դուքան, հալբաթա դաջխուա կուլին (կըընթհարւին), վունց վուր մաշինէքը, ան կօնկէն ու փայտօնները, վուր մէկմէկու գիփչում ին։

—Թանդիխան մարթիք էլ ին մէկմէկու գիփչում, Մակար ջան։

—Հենց էտենց, դրուստ էտենց։

—Հիմի մէ չարա չկա՞յ, վուր էտ բանը գլուխ չգայ։

—Ինչի չէ. էտ թասուր բանիր շատ կայ, համա ած ի՞, վուր էս աշխրքին մարթ լաւութիւն անէ՞. գիդիս պարոն Գասպար թէ խալխը վունց է մուտտարի, ամեն մէ վիկենող, ջէր մօր ծիծը բերնում դրած՝ օրացուցնիր է մօղոնում. բաս էտի հախը չէ՞, վուր շուտօք էտ բանը ըլի՞։

—Ղուրթ իս հրամանք անում, համա մէ էրկու ափամախի համա, խօ չի՞նք կանայ աշխարքը մօշլա անի։

—Արա էլի մտիկ տու էտ սամովրի տրուբումը, տեհնում իս ինչիր կան. ա՛յ լուանի վրէն մէ լաւ վուր տնդղիս, խալխ էլ կու էրևայ։

—Վո՞ւնց թէ խալխ, նա ադամարթ չի՞։

—Չէ, նա էլ միր երկրի թասուր աշխարք է։

—Վա՛, վա՛հ, վա՛, մաշ արևը ախչիկ...

—Ախչիկ կի չէ, մէ կրակի քուրա է, էրեւում է։

—Սիրահարւած խօ չէ՞։

—Չէ՞, էնենց է էրեւում։

—Բաս վուր ուզենանք՝ չի՞ ըլի վուր էտ փաթերակեմէն աշխարքը ազատուի։

—Ինչու չէ, գիփ փուղի բան է։

—Վո՞ւնց, գեթադւայ։

—Թալիը թէ դուգէ աշխարքիս վրէն անշառ ապրիլը, ջէր ջէրօրիթ «Խաթաբալէն» պիտի կարթաւ վունց վուր սուփ գիրք, իժում իմ օրացուցնիրը պիտի վիկալնի ու անգիր անի։ Կարթացի՞ր, էն վուր գրել էի Յուղմախատն անօրին, էնենց էլ էլիլ է Եապօնիումը, գազէթներում գրած էր. մէ ջէր էլ գրած էի տար տար եղանակ, ամառը վուր տաք էր, խօ գիդում իս, բա՛ս. Հա՛, թէկի մարթիք ուզում ին, վուր աշխարքս էլի մնայ... արա էլի մտիկ տու տրուբումը, էն մինձ աստղը տեհնում իս, նրան Արուսեակ ին ասում։

—Արուսեակը էտի ինչ է շինում, նա հիմի դասերը սովրելիս կուլի. խեղճ աղջիկը աուտեհան գնում է շկօլ, իժում ճաշած փախչում է բատանիցկի, հիմի վուր մթնիլ է, տանը կուլի։

—Էտ աստղիրը մէ մէ աշխրքի թասուր բանիր ին. ապրում ին հետի...

—Աստուծը բաս վո՞ւրդի է։

—Այ էնդի, վերև դէմուդէմը վուր մտիկ տաս։

—Հիմի ծվ գիդի, արքաութինումը՝ թըրտարի մէջ կուլի։

—Հալբաթա կուլի. բաս չէ ու միզ պէս էտի օր ու գիշիր լօթի կու էփի. խաչ էլ չի ճարւում, էն անտվխտանները խօ ջիգար էլ չին ծախում, կօսիս տաւարն ու օխչարը անջիգար ըլին։

—Էհ, դուրթ իս հրամանք անում, պարուն Մակար, համա նհախ տիղը վուր աշխարքը մօշլա ըլի, էտ էլ լաւ չէ։

—Բաս ինչ անինք։

—Մէ բան փիքր անինք, այ պօլիցին արգա տանք, միր կուտացկութիններուն. ցօցիալ-դեմօղրատներու, դաշնակներու, հնչակութեններին արգա գրինք, ասինք թէ մինք դարուլ չինք, վուր աշխարքը մօշլա ըլի ու մէ ճար էլ ինթրինք. Թամ չուրս տարի աղաք թուրքիրը վուր էկան. վո՞ւնց յիդ գնացին. իմ մաներից գալիս է։

—Դուն էլ իս դուրթ հրամանք անում, համա, չամէ պարոն Գասպար։

—Էս մէկը իմ խաթրու ու իս գիդիս իմ մարթութինը։

—Ինչ կու խօստանաք։

—Հրամանք կօնիմ, վուր քու օրացուցնիրը գիփ առնին։

—Թէ էտենց է, բաս կու աշխատիմ, համա աստղց քիղ բան չի ըլի։

—Իս ինչ կանում օսկի։

—Թալխին պիտիս հրամանք անի, վուր խիլքի գան, հայէվար գիր ու գազէթ կարթան, Նամուսասուր ճամփի վրէն ման գան, էչմիածնին փուղ տան, դօղնաղ բլոմա էփին, «Խաթաբալին» բաժնուրթ դրւին։

—«Խաթաբալէն» կօտկի՞։

—Վա՛, միածրեքա Է՞, (միակ միջոցն է) մենակ դա էլ հերիք է. ու շուտ շուտ էլի համեցէք, արէք էտի, էս տրուբա դուրբինով մտիկ տւէք ու իժում կու տեհնիք, թէ ինչիր կուլի։

—Բաշուստայ։

Որովհետև արդէն լուսանալու վրայ էր, տանիքից իջանք ու ճաս բարով ասելով մեր պարոն աստղագէտ Մակար Զըմշկեանին, եկանք խմբագրատուն։

Պարոն Գասպար Կալատուզեանցը հրամայեց ինձ, այս խօսակցութիւնը տպել ի լուր աշխարհի և բոլոր մարդկութեան։

Իօխան Գօլէսիկեա

---

Նախատեսութիւն

Ամանեղէնների խանութում յաճախորդը.

— Տւէք ափսէներ և բաժակներ։

— Ի՞նչ տեսակի.

— Ամենահասարակ և բարակ տեսակից, որովհետև կինս բոլորն իմ գլխին է ջարդելու...

## Մակար Ձմշկյանի «Օբսերվատորիան»



Գասպար Կալանթարյանը և Մակ. Ձմշկյանը դիտում են տիեզերք և Հալլեյի մոլորակը։

## Պարսկական դալաքխանում



— Ա՛յ Հասան, տես, տես թէ ինչ են գրում լրագրներում. ասում են թէ սահմանադրականները ուզում են էլի կռուել ռուսների հետ, ռուսներն էլ վախում են։

— Ի հարկէ կը վախեն, ո՞վ ունին էնպէս քաջ մարդ, որ սահմանադրականներին յաղթէ, ա՛յ թէ Սաթթար խանին կանչեն հա՛, սահմանադրականներին թոփի նման գրգռէ։

## ՃՈԽՍԱՀԱՅԻԱՏԸ

Ի՞նչ ես քեզ ու քեզ՝
Մէջքդ ճօճելով՝ ծամծմում այդպէս
Ու ոլոր-մոլոր
Թրև ես տալիս փէշերդ բոլոր։

Տանջելուս համար
Մի՞թէ դրել են յոնքերդ կամար,
Որ ինձ չես նայում,
Երբ քեզ աչքերով նշան եմ անում։

Դու ինձ տանջեցիր.
Անէծք եմ թափում գլխիդ՝ իմացի՛ր.
Ուզում եմ՝ շատ ես,
Որ Յղուհայի ոտի տակն ընկնես...

Գէօ-Գէօ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԶԸՐՈՒՑ

Գալէթանի ապայ ջան.

Հրամանքիդ եարգումնի, իմ ալ հին եարան եօլդաշ Դ. Ա. Ջաղացը կօրցրիր, չախ չախը փնտռէ կը։ Բանիր է նախչրճեցի սեֆիլ Բօնժուռ Մելքոնին եախան, թէ ինչի՞ «եվ» գրիս կը, «ե» չիս գրի։ Աստեղ ին ըսիր թէ, դուին ըսին, ինչի՞ շլինքդ ծուռն է, ըսեց «վերանեղս է շիտակ, օր շլինքս ծուռն է»։ Հիմի Մելքոնին վըր խօսքն է շիտակ, օր «եվ»-ը ծուռն է.

Հարիֆը քեարտիկեա գրէ կը։ Քեարտիկեայ չիք հասկնայ, եամաշ հասկըցնիմ։ Սոփի տարիները փուխարայ մարդիկ ցըրեն ու գարի ալուրը խառնին կը յիրար հաց թխին կը, ատ հացին կըսին կը քեարտիկեայ։ Մելքոն աղբարս ալ հայերէն, թուքերէն, ռուսերէն խօսքերը խառնէ կը յիրար՝ բարեագիր թխէ կը. ատ բարեագրին ալ կըսին կը քեարտիկեայ։ Ռըսերէնը ռըսերէնի չեշիտ չէ, հայերէնն ալ հայերէնի չեշիտ չէ։ Անհան նմուշի խաթեր հմար քանիմ խօսք աստեղ դնինք։ Մելքոն աղբարս «Թաթարալի» 47 նօմերին մէջ գրէ կը «դրօշնիկը, փատառքայ, փառնասիա, փոխչինը, ուժէ, չօռթ ըռնիմ (ատ մէկը հասկցայ, սատանի անուն է) գանալիչնի, սաստաւիթ...» Ատ գօջայ գերանները թօղիր է, ինկեր է «եւ» երի յետեից. Բօնժուռին Մելքոնը ինչ գիտէ, թէ աշխրհքիս մէջը էրկու «ե» կայ. ես կը գրեմ «եւ՝» թէ օր քեասաա տարի է. մուրաքեապը քիչէ. դուն կը գրիս «եվ՝» թէ օր բօլլուղ տարի է, թօնային է, մուրաքեարը շատ է. չունքի թէ «ւ» գրինք, քիչ մուրաքեար է հարկաւոր, թէ «վ» գրինք, շատ մուրաքեար կերթայ։ Բօնժուռին Մելքոնը շատ մուրաքեար ունի. թող «եվ» գրէ, մենք ալ աղքատ ինք՝ գրինք կը «եւ»։ Վարսալամ. վարքեալամ. պրծանք գնաց, ալ ինչ զալմալայ։

Դալալի Մարգար

### ՔԱԹՈՒԻՆՑԱՐԻՑ

*Նգնա՛ սա, սա ատորոնթրան Խամէլայէլա կազէթիտ ծնորով, խրնթոնմ փօժալումա տուրէք Դ. Ա. մեծ աղային։*

*Ի հազար ինձը հազուր և ինձը ամի, քանաւութն նաւննեղէնի Քաթարնաստար։*

—

Նորին պատւելի Դ. Ա. մեծ աղա. «ւինը» «վեւի» տեղ խուլամիշ չեղածները, ինչէս կնայիմ, ծեզի մեծ զարար տուբիլ է, անոր համար ալ, ատ տօնով ինծի միկըւըը կուտաք, շնորհակալութիւն, ամա ատ խաղինակ «ւ, ու»-ը պահեցէք, ծեզի պէտք կըլայ, ծմեռը փուք կանը, չանայի տեղ խուլամիշ կլաք, մէքամ ծի կանուխ կլծիք կատաննիի կերթաք։

Աւուած օղորմի հորուն. Թ. Պատկանեանը մեր Նաշչըանցի թէմից հայնակ լեւզույով «էրիւան» փորուղին «Աւսաք» եա մէկ ուրիշ պան կրած իքէնը, խիստ տեղով կիտէր որ «այիփ, փէմին» մէշը «ւինն» ալ կայ, ամա «վեով» կըկրէր. Նափրիմեր, «տաավ, տարավ, կերավ, (էւրոպա չէ) գալպանից փախավ» կըկրէր, շինող հասկըցմաք, Շոէ, մեր Նաշչըանցիի կալաճին, եա կիրը հասկընալու համար, Նաշչըանցի պիտ ըլալ, չէ քի տուասցի։ Ախպար կրած «ԵՎ»-րա ալ «ե» ի չի լմանի, պութոր «ւ»էն Բալանթարն է, «ե»ն ալ հաճի Համպարցում Աստքելովը, որ պուչը պրանած էտեէն կերթայ։

Պօնժուռի Մելքոն

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

# ԲԱՑ ՀՐԱՄԱՆ

(«ւ» և «վ» գրողներին)

### ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆ

Թաթարալայական Դիւանը հասու եղաւ պ. Ղազարոս Աղայեանի առաջադրութեան և յարգելի Պօնժուրի Մելքոնի բացատրութեան, որ վասն ւ և վ տառից, և այդ մասին զանազան կարծիքներ, յիմար և խելօք դատողութիւններ լսելով շատ վկաներից՝

## ՈՐՈՇԵՑ

Վասն և յօգուտ հայկաբանութեան, այլև ազգային համերաշխութեան և ընթերցողաց դիւրութեան՝

Գ ա ւ ու ր ե մ ք՝

Վ. տառն վտարել և գործ ածել ի հարկաւոր տեղիս ւ—այն է հիւն։

Ի վերայ խախականին ստորագրեալ է՝

Դատապար Կալատուզով



## ԽՈՒՐԴԱ-ՄՈՒՐԴԱ

— Գիտես, ես համարեա թէ կիսով չափ ամուսնացած եմ մի օրիորդի հետ։

— Ինչպէ՞ս թէ կիսով չափ։

— Այո, շատ հասարակ կերպով. չէ՞ որ ամուսնանալու համար հարկաւոր է երկու կողմերի համաձայնութիւնը։ Արդ, ես արդէն իմ կողմից համաձայն եմ, հետեւապէս դժւարութեան կէսը յաղթւած է, մնում է միայն օրիորդի համաձայնութիւնը, որ գործը գլուխ գայ։

—

Որդին մի անգամ հօր վրայ ծիծաղելու համար, մի անպիտան կտոր կարմիր ծիծակ է գցում նրա ամանի մէջ։ Հայրը, առանց կասկածելու սկսում է ուտել կերակուրը և առաջին իսկ գդալից, նրա աչքերը սաստիկ ցաւից լցւում են արտասուքով։ Այն ժամանակ որդին դառնում է հօրը և հարցնում

— Հը, հայրիկ ինչ կայ, ինչու ես լալիս

Հայրը առանց բարկանալու պատասխանում է։

— Մէկուճար որդիս մեռաւ, ինչպէս լաց չլինեմ։

Վրում

## ԲԺՇԿԻ ՏՒԱԾ ԴԵՂԱՏՈՄՍԸ

(Նմանութիւն)

Կինս հիւանդ էր և այն էլ սաստիկ հիւանդ։

Ինչ միջոցի դիմեցի, ումից խորհուրդ հարցրի, ոչ ոք չկարողացաւ մի խելքը գլխին խորհուրդ տալ։

Քանի գնում, օր ըստ օրէ աւելի էր հիւանդութիւնը սաստկանում, մնացել էի՝ կրակի մէջ, չգիտէի ինչ անէի. կինս արդէն չափազանց ջղային էր դարձել, որը ես տանել չէի կարող։

Տանը չէի կարող նստած մնալ, ամեն մի րոպէ, կնոջս ձայնն ականջումս էր և ես տանը նստելուց վաղուց էի ձանձրացել։

Մի երեկոյ, երբ կինս դարձեալ սկսեց իր գոռգոռոցը, անախորժութիւններից խուսափելու համար տանից դուրս եկայ և քայլերս ուղղեցի դէպի քաղաքային այգին։

Մտամոլոր և առանց ոչ ոքի ուշադրութիւն դարձնելու քայլում էի, երբ պատահեցի մի բարեկամիս։

Բարեկամս տեսնելով ողորմելի դրութիւնս, խորհուրդ տւեց դիմել Նորեկ համբաւաւոր բժշկին, որի համար հրաշքներ էին պատմում։

Անմիջապէս գնայ բժշկին ու տարայ կնոջս ցոյց տւի։

Նա կնոջս հիւանդութիւնը քննելուց յետոյ, դեղատոմս գրեց և գնաց։

Իսկոյն վազեցի դեղատուն, առացայ իմ ցանկացած դեղը և վազեվազ հասայ տուն։

Բայց արի դեղաշիշը և դեղը լցնելով բաժակի մէջ տւի կնոջս։

Կինս սկսեց զանազան ծամածռութիւններ

անել և խնդրել ինձ, որ չխմացնեմ գետը։

Ինչքան աղաչեցի, ոչինչ չեղաւ. կինս չէր ուզում խմել։

Ինքս ինձ մտածեցի և տեսայ, արի առաջ դու խմիր և օրինակ դարձիր կնոջդ, խմեցի և տեսայ, որ չափազանց համով բան է։ Կինս տեսնելով որ ես ախորժակով խմեցի, մի բաժակ էլ ինքը խմեց։

Որովհետև գետը շատ էր դուր եկել ինձ՝ սկսեցի մեկմեկու յետևից մի քանի բաժակներ դատարկել. կնոջս փոխարէն էլ ես էի խմում։

Բայց այդ բոլորը երկար չտևեց։ Գլուխս սաստիկ ծանրացել էր, և ոտքիս վրայ չէի կարողանում կանգնած մնալ։

Անզգայ ընկայ գետնի վրայ և այդպէս էլ քնեցի…

—

Տանից դուրս գալով իջայ փողոց, դռնապանը, որ փողոցը ջրջկում էր՝ վերցրեց վեդրայով ջուրը և անզգուշութեամբ թափեց վրաս։

Չկարողացայ տանել «դվօրնիկի» անզգոյշ վարմունքը։

Երկու ձեռքով ամուր բռնելով նրա օձիքից, բարձրացրի օդի մէջ և բոլոր ուժով խփեցի գետնին ու թողնելով այդ դրութեան մէջ հեռացայ, յետևիցս լսելով դռնապանի հայհոյանքը։

Ես այդ օրը բոլորովին փոխուել էի և ամէն բան ինձ համար ոչինչ էր. մի գերբնական ուժ մտել էր իմ մէջ, ուզում էի ջարդել, փշրել այն բոլորը, ինչ որ դէմս ցցւում էր։

Հազիւ դռնապանից հեռացել և հասել էի բուլւար՝ երբ մէկը լրագիրը քթին դէմ արած՝ ընդհարուեց ինձ բոլոր ուժով, չկարողացայ տանել այդ մարդու կոպտութիւնը, բռնեցի նրա օձիքից և որքան ուժ ունէի, հրեցի նրան մի կողմ. խեղճը մէջքի վրայ ընկաւ մօտիկ նստարանին, որի վրայ նստած էին մի քանի օրիորդներ, իրենց կաւալերներով։

Նստարանը շրջւեց ծանրութիւնից և վերան նստողները բոլորն էլ վայր թափւեցին։

Տեսնելով որ բանս բուրդ է, սկսեցի փախչել, նրանք էլ ուշքի գալով, սկսեցին վազել իմ յետևից և գոռալ.

—Բռնեցէք, բռնեցէք, այդ սրիկային։

Վազում էի խելագար թափով, հէնց ուզում էի անցնել մի կաթնավաճառի խանութի առաջից, երբ յանկարծ առաջս դուրս եկան երկու ոստիկաններ, և ուզեցին ինձ բռնել, բայց ես թէ մէկի և թէ միւսի կրծքին մի ուժեղ հարուած տուի ձեռքով, և երկուսն էլ ընկան կաթնավաճառի պնակների վրայ, պնակները փշրեցին։

Ես դարձեալ սկսեցի փախչել…

Այժմ թշնամիներս շատացել էին, բոլորն էլ իմ յետևիցն էին ընկել։ Առաջիս տընկւեց մի բօսեակ, նա ուզեց ինձ բռնել, բայց ես վայր ձգեցի նրան և ոտքերից բռնելով, սկսեցի օդի մէջ պտտացնել գլխավերևս, պաշտպանւելով ամբոխից։

Ամբոխը մնաց փայտացած և կանգնած։

Մի երկու անգամ էլ պտտեցրի գլխավերևս և որքան ձեռքումս ուժ կար, մեծ թափով շպրտեցի նրան դէպի ամբոխը։

Չգիտեմ ինչ պատահեց խեղճի հետ, մեռաւ թէ կենդանի մնաց, միայն երբ որ յետ նայեցի, ահագին բազմութեամբ ամբոխը դեռ վազում էր յետևիցս։

Սկսեցի աւելի արագացնել վազքս։

Բայց այժմ էլ մի նոր դժբաղդութիւն. առաջս ցցւեց մի ահագին պատ, ոչ մի կողմից ճանապարհ չունէր անցնելու, իսկ յետ դառնալ՝ անկարելի էր…

Երկար չմտածեցի, մէջքս դէմ տուի պատին և բոլոր ուժով յենւելով՝ փլեցի ու շարունակեցի իմ խելագար վազքը։

Ցետ նայեցի, ամբոխը դեռ հետևում էր ինձ։

Ի՞նչ անել, կանգնել չէի ուզում, իսկ փախչելու էլ հնարաւորութիւն չկար։

Աչքս ընկաւ փողոցի անկիւնում ցցւած սիւնը, որի վրայ ամրացրած էր լապտերը։

Մի վայրկեանում արմատախիլ արի երկաթէ սիւնը, դրի ուսիս, ամբոխը արդէն շրջապատել էր ինձ. սկսեցի պտոյտներ գործել բազմութեան մէջտեղը, ամբոխը երբ այս բանը տեսաւ, սարսափած յետ փախաւ, օգտւեցի հանգամանքից և սկսեցի սիւնը ուսիս փախչել։

Բայց սիւնը քանի գնում, աւելի ծանր էր թւում ինձ, յանկարծ աչքս ընկաւ ոտքերի, որոնք ճօճւում էին օդում իմ կողքերից։

Այդ ոստիկաններն էին, որոնցից մէկը կախւել էր սիւնի մի ծայրից, իսկ միւսը միւս ծայրից։

Բեռս քանի գնում աւելի ծանրանում էր, որովհետև նոր կախւողներ էին աւելանում.

Ինձ կորած էի համարում, նկատեցի կամուրջը, որի տակով հոսում էր կատաղի գետը, քաշ տուի բոլորին էլ այնտեղ և թափեցի գետի մէջ։

Սկսեցի փախչել, բայց բախտը այս անգամ իր երեսը շուռ էր տւել ինձանից։

Փողոցով վազելու ժամանակ, ոտքս կըպաւ աղբի արկղին և վայր ընկայ։

Այլես չկարողացայ վեր կենալ, որովհետև ամբոխը թափւել էր վրաս և հասնողը գըլխիս էր խփում, սկսեցի պաշտպանւել, ով որ ձեռքս էր ընկնում, բռնում էի և գնդակի նման շպրտում։

Յանկարծ լսեցի մի սարսափելի ճիչ, աչքերս բաց արի և տեսայ, որ այդ բոլորը երազ էր։

Երազումս սկսել էի սենեակի աթոռները, սեղանները, ծաղկամանները ու ինչ որ պատահել էր, այս ու այն կողմը ձգել, սենեակը կատարեալ քաոսի էր նմանում։

Խորէն-Ժան-դը-բիլ

## «ԴԻՄՕՆԻ» ԵՐԳԵՐԻՑ

Լուսնեակ գիշերին աստղերը դժգոյն
Որպէս ցրտահար՝ դողում են մրսում.
Եւ Աւրօրայի զարթնելուն իսկոյն՝
Կարծես տաքացած հալւում են, մաշւում…

Ես էլ կուզէի աստղերի նման
Տաքանալ քեզնով, Աւրօրա իմ գեղ,
Հալւել, չքանալ գրկումդ միայն
Ժպիտներդ տրած, ժպիտներդ անմե՜ղ…

Ա՜խ ես լինէի, մի զուլալ աղբիւր
Եւ կարկաչէի լեռների միջին
Չորս կողմս լինէր հանգիստ ու անդորր,
Ու ջրումս դողդար շողքը արևին…

Դու էլ մօտ գայիր իմ սառը ջրին,
Նստէիր ափիս, երգըս լսէիր
Եւ ցանկանայիր շրթունքդ դնել
Բերանիս վերայ… ու ջուր խմէի՜ր…

Դիմօն

## ԴԻՍԻՑ-ԴԻ՛ՆԻՑ

Մի 20 տարեկան «շիկ» աշակերտ, բըռնած մի աշակերտուհու ձեռքից, իւր սէրն է յայտնում։

— Բայց դուք կսիրէ՞ք… դուք սիրել գիտէ՞ք,—հարցնում է կարմրատակած աղջիկը։

—Օ՛, այդ մասին դուք հանգիստ եղէք.— որ ես գիտեմ սիրել, դա փաստ է, և այդ ապացուցանելու համար բաւական է ասեմ, դեռ պատրաստականից սկսած՝ բոլոր բաժանմունքներում 3-ական տարի եմ նստել… հպարտօրէն պատասխանում է աշակերտը։

—

### Փօլզա-պրօզա

Երեկոյեան թէյի ժամանակ, ամուսինը մոռացած թէյը, գոհունակութեամբ մտածում է, որ վաղը սիրային տեսութիւն ունի նշանակած, և միտք է անում, թէ ինչպէս անի, որ իւր սիրուհուն աւելի դուր գայ։ Նրա մտքերը կտրում է կինը, ասելով։

— Գիտես Միշա, այսօր մեր ամուսնութեան ուղիղ 10-դ տարին է։

— Թի՛ւ,—գոչում է չարացած ամուսինը, դու միշտ սովորութիւն ունիս մարդուս տրամադրութիւնը զանազան յիշողութիւններով փչացնել։

—

### Բ ռ ն ու թ ի ւ ն

Ընտանիքը նստած է ճաշի։ Ամեն ինչի մէջ «պատուհասաւոր տօն» տիրապետող հօր հրամանով, արգիլւած է հացի ժամանակ խօսելը։ Ճաշը սկսւում է։ Լռութիւն է։ Աղջիկներից մէկը սկսում է։

— Հայրիկ, սպասիր, մի ուտիլ.— ես տես…

— Ոչ մի խօսք, հացդ կեր—կտրում է հայրը։

— Հայրիկ, ախար ես տեսայ… սկսում է աղջիկը։

— Լռիր, քանի՞ անգամ եմ ձեզ յիշեցնելու.—կտրում է հայրը։

Ճաշը անցնում է լուռ։ Վերջը հայրը դառնալով աղջկան, ասում է.

— Դէ հիմա սաս, ինչ էիր ուզում ասել։

— Ես ուզում էի ասել, որ սուպը չի կարելի ուտել, որովհետև աչքովս տեսայ, թէ ինչպէս նրա միջից Մաշան մուկը հանեց…

Կոլյան Ցակովր

---

## ՀԱՅ ԳՐԻԿԱՇՁԻԿՆԵՐԸ ՕՊԵՐԱՅՈՒՄ

*(Որոնք լայեղ չեն անում հայերէն խօսել)*

—Այդ մեր տեղը չէ տօ… մեր տեղը ամենավերջին կարգումն է։

—Բեզ ասում եմ նստիր, շատ էլ վերջին կարգի տոմսակ ենք առել, վերջին կարգում խօ չպէտք է նստենք, մեր հագուստին կը սազի՞։

—Շատ լաւ, բայց որ գան ու վեր կացնեն… ամօթ չի՞… ինչ մոգոնենք։

—Դու նստիր, տեղի տէրը որ գայ, կասենք վինովատ, պաժալուստա ու իժում ուրիշ տեղ կը նստենք. տեղի տէրն էլ թէ աղջիկ էլաւ, խօ աւելի լաւ, կը ծանօթանանք։

—Ո՞նց թէ կը ծանօթանանք։

—Ա՛յ ոնց. անդրախտ որ կը լինի, մօդ կը գնանք ու կասենք «պաժալուստա վինովատ, շտո մի վաշի մեստը սադիս» իժում հետը զալում ման կը գանք, համա դուն չը մոռանաս, գիտ ռուսէն խօսի հա… ա՞ա՞ա՞, փարդէն վեր են քաշում, նստի…

—Վա՜… ինչ ես ծիծաղում, միթէ ինչ հասկացար։

—Ոչինչ էլ չը հասկացայ, ուրիշները ծիծաղում են, ես էլ եմ ծիծաղում։

—Ախար ուրիշները կամաց են ծիծաղում, դու կի հըռհըռում ես։

—Միթէ ես նրանցից լաւ եմ հասկանում, էնդուր եմ բարձր ծիծաղում… պատարե՞տ, պատարե՞տ… Հիմի դուս գնանք զալումը ման գանք։

—Ռուսէն խօսենք, չէ՞…

—Ի հարկէ։

—Սէվօդնի նաս պլօխօ տարգօվլի…

—Մ՜ուս՜… էդ ինչ ես ասում, էդ խօ իմացան որ պրիկաշչիկներ ենք։

—Բաս ինչ խօսեմ։

—Զնայե՞շ Սիմեօն, եա վչերա պաշօլ նա Բօգեմբերգ նա տանց…

—Վա՜… բարիշնը մնօգը բէ՞լ։

—Օչին մնօգը. եա վիդալ ադին սինպատիչնի բարիշնը սաայիդ. պաբլիժել ի սկազալ «բարիշնա, վի տակ սկուչնա, վի նի բուդիշ ատարոյի տանցուատ». օն սկազալ պաժալուստա. մի նաչիլ տանցուատ, պատօմ եա նա եվօ մազօլ նօգ պալաժիլ, օն սրեժալ ի ուբեժալ։

—Տօ դու լաւ ռուսէն ես խօսում, ես որ ըտենց չեմ գիդայ։

—Դու ինչ որ ասեմ գլուխդ թափ տու ու մի մի ջէր էլ ասա, նի ուժելի, շտօ վի գաւարիշ. համ էլ թէ մէկին գիպչես, ասա պարդօն։ Հիմի գնանք մի լաւ տեղ գտնենք, էստ կըսկսեն։

—Ես էլախտւայ տեղը էլ չեմ նստի։

—Ընչի՞ տօ…

—Չէ ախպէր, էն կողքիս նստած գէնեբալը էլի հարց ու փորց կանի, ջլիս կը շշկլեմ, էլախտ էլ ձլիւ պրծայ։

—Ի՞նչ հարցրեց որ։

—Ես ինչ գիդամ. ասմա, սեօդնի եւլախով չուգնը պայեօտ,

—Դու ինչ ասիր։

—Ասի, սազանդար Արութին լուչի, պատոմ զուռնաչի Բագրատ իշչօ լուչի։

—Դէ լաւ ես ասել էլի, էլ ինչ ես ուզում, նստի, նստի, փարդէն վեր են քաշում։

Բախօօ

### Անըղղելի օրէնք

Պրօկուրօր։ Բանի որ օրէնքում չէ ասուած, որ կանայք իրաւունք ունին փաստաբաններ լինելու, ուրեմն իրաւունք չունին։

Զայն ժողովրդից։ Իսկ օրէնքում ասուած է, որ կինը իրաւունք ունի պրօկուրօր ծնելու։

— Ոչ.

— Այդ դէպքում ձեր մայրը ապօրինի է ծնել ձեզ…

—

Դատաւոր. Ճի՞շտ է, որ դուք գողացել էք գինով լի տակառը։

Մեղադր. Այո, պ. դատաւոր,—և խմել եմ, ուստի կարեկցութիւն եմ հայցում։

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


**№ 4711 ՃԱՐՊՈՏ ԾՊԱՐ**

**Жирная пудра**

Սպիտակ, վարդագոյն և դեղին. Պատրաստած է ամենանուրբ նիւթերից, որոնք կաշու համար վնասակար չեն, և մորթին կակղացնում ու քընքշացնում են։

**ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷ՛ՆՍ**

Քէօլն Ռայնի վրայ Ռիգա,

Նորին Կայսերական Մեծութեան դատ մատակարար

Ферд. Мюльгенсъ

Кельнъ н/Рейнѣ отд. въ Ригѣ

5—2


— Կառապան.

— Ո՞ւր էք հրամայում։

— Ձեմ հրամայում, այլ խնդրում եմ…

— Էհ, որ փող չունիք, գլխիցս ռադ եղէք…


МАГАЗИНЪ

**Композиція**

Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8

**Громадная экономія**

шведскаго композиціон. бѣлья.

**Носится не менѣе двухъ лѣтъ**

Постоянный большой выборъ свѣжаго товара

**Воротниковъ. манишекъ и манжетъ.**

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей



**по фабричнымъ цѣнамъ**

**передѣлка въ любой фасонъ безплатно**

М. А. КАЛТАГЯНЦА 30—22



**Խարաբալիստներ բոլոր Թիֆլիսի**

ԵՐԲ ՈՐ ՇՐՋՈՒՄ էք Գոլովինսկի պրոսպէկտի վրայ, մի մոռանալ Արքունի Թատրոնի դիմաց, Անանեանի տանը գտնուող

**Օ-ԲՕՆ-ՄԱՐՇԷ**

վ ա ճ ա ռ ա տ ո ւ ն ը, որ առաջիկայ տօների համար ստացել է մեծ քանակութեամբ կանանց ու տղամարդկանց արդուզարդի պարագաներ, գըլխարկներ, շարֆեր, վզնոցներ, փողպատներ և այլն և այլն։

Ծախւում է անսահելի էժան գնով։ 3—1

Մանուֆակտուրային վաճառք

МАНУФАКТУРН. магазинъ ՅՈՎ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ И. Г. КАЧКАЧЕВА Сололакск. ул. № 4

Հոկտեմբերի 20-ից, Սօլօլակեկայա փողոցի վրայ, «Պրօվօդնիկ ընկ.» խանութի շարքում, Ազօվ-Դօնեան բանկի ներքեւում, (Ամիրաղեանի նախկին խանութի տեղը) բացուած է մանուֆակտուրայի ապրանքների ՎԱՃԱՌՔ. Ստացուած են մեծ քանակութեամբ սէզօնի նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր գոյնզգոյն հիմնարկութիւնների պաշտօնազգեստների կտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պլէդներ՝

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Բրդէ շալեր, պլիւշի, բայկի, պիկէ, ատլասի եւ Քաշմիրի վերմակներ։

ԲԱԹԱՆԷ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ

ամենալաւ ֆաբրիկաների, գորգինե տիւլ, պլիւշի սփռոցներ, Թաւիշ, պլիւշ և մանչեստր։ Բազմաթիւ գոյներ։ Սատին, բատիստ, բումազէյ, նուզօտէ և չիթ։ Բամբակէ գործուածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ։ Բայկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ։ Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գնով։

ՎԱՃԱՌՔԸ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ

ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

—o— ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ —o— 20—7

ՇՏԱՊԵՑԷՔ ԳՆԵԼ

Ա. Ի. ԱՄԻՐԱՂԵԱՆԻ

Մանուֆակտուրի վաճառատունը Թամամշեանի քարւանսարայում №№ 19, 22, և 23 առևտուրը վերջացնելու պատճառով

ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ

Ծախւում է եղած բոլոր ապրանքը—ամեն տեսակ մետաքսի, բրդի մահուդեղէնի, քաթանի, բամբակի և կահաւորութեան կտորներ։

ՕԳՏՒԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ

10—9

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԿՈՄՊԼԷԿՏՆԵՐ

ՓԱՌԱԿԱԶՄ

| | |
|---|---|
| 1906 Թ. արժէ | 5 րուբլի |
| 1907 Թ. | 7 ր. — |
| 1908 Թ. | 7 ր. — |

Մ ա մ ա ն

— Այստեղ, որդիս, այնպիսի պատկերներ կան, որոնք ձեզ տեսնել չի կարելի...

— Ի՞նչ պատկերներ, մաման.

— Այ, արիք ցոյց տամ...

---

Տանտիրուհին. Խնդրեմ մի կտոր սագի միս հրամեցէք.

Հիւրը (մտայլ) Չեմ ուզում.

— Ինչու.

— Նրանք մի ժամանակ Հռոմը ազատեցին.

— Է՛ դրանից ինչ եղաւ որ։

— Իսկ ես կնոջս հետ Հռոմում եմ ծանօթացել։ Եթէ նրանք Հռոմը ազատած չլինէին, ես չէի դժբախտանալ։

—

Չէ նկատել

Քննադատը տեսնելով նկարած մի կնոջ պատկերը, ասում է.

— Գեղեցիկ նկարած է, բայց ափսոս, որ մոդելը՝ ապուշ դէմք է...

— Դա իմ մօրս պատկերն է—ասում է նկարիչը։

— Ախ, ներեցէք. Ինչպէս էլ չնկատեցի, դուք այնքան նման էք նրան.

Թիֆլիս քաղաքի կենտրոնում

Վայեննայեա փող. սեփ. տուն № 5.

ՆՈՐ ԲԱՑՒԱԾ

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿԻ ՆՈՄԵՐՆԵՐ

Սենեակները շքեղ կահաւորուած, վաննա և դուշ. ամենամեծ յարմարութիւն ընտանիքով եկողների համար։

Կին եւ տղամարդ ծառաներ ՔԱՂԱՔԱՎԱՐԻ.

Նոմերները 1 րուբլուց սկսած և աւելի։

Ամսականով կեցողներին առանձին մեծ զեղջ։

ՋՐԻ ՎԱՌԵԼԻՔ

Գոլովինսկի փողոցից 2-րդ տունը, բազզոնի փօշտի դիմաց, որի ներքին յարկում տեղաւորուած է Վլադիկաւկազի, Թելաւի և Սղնախի տրակտի գրասենեակը։

Տան սեփականատէր Ալէքսանդր Մ. Ցարուբինով։ 5—3

## Թուրքերէն օպերա



«Բազում Թուրքեր օպերաներ են ներկայացնում Թուրքերէն լեզւով, հասարակութիւնը միշտ ծայ-րէիծայր լցնում է Թատրոնը»։ (Լրագրներից)

Հայերը թող սրանցից օրինակ վերցնեն։

## ԴԷՊԻ ՇՈՒՐ




ՆՐԱՆՔ ԳԱԼԻՍ ԵՆ, ՄԵՆՔ ԳՆՈՒՄ ԵՆՔ. ՇՈՒՐ...

(Առաջին վճարը ստանում է «Խաթաբալա» մի տարւայ կոմպլէկտ)

## Նորութիւն Կովկասի համար

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՆԵՐԿ

# „КУФАЛЬ"

Միմիայն 20 կոպէկի տալիս ենք 1 փաթէթ ներկ և 1 փաթէթ պրոտրաւ ցանկացած գոյնի, որով ամեն մարդ կարող է առանց մի դժուարութեան ներկել ամեն տեսակի (2 ֆունտ քաշ ունեցող) կտորեղէններ, ինչպէս են կանանց և տղամարդկանց զգեստներ. գուլպաներ, լենտեր, կրուժեվաներ և այլն և այլն։

„Куфаль" ներկով ներկած կտորեղէնները՝ ոչ մի դէպքում չեն խունանայ։
„Куфаль"-ը իր էժանութեամբ մատչելի է հասարակութեան բոլոր խաւերին։

Գոյների շարքում ունինք նաև „Защитный» գոյնը, որը առանձնապէս պիտանի է զինուորականներին։

Ամեն 1 փաթէթի հետ տալիս ենք «Куфаль-ի գործածելու միջոցը, գրուած ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով։

Գումարով գնողներին զգալի զեղջ։

Օտար քաղաքների պատւէրները կատարւում են ամենայն ճշտութեամբ, ստանալով նախավճար։

Մեր հասցէն гор. Тифлисъ, Красногорская ул. д. № 11
М. М. Купалянцъ.

10—1 Կառավարիչ՝ Կ. ԲՈՒՓԱԼԵԱՆՑ


Դատաւոր.—Դուք մեղադրւում էք ձեր անմարդավայելութեան համար—դուք ձեր կնոջ գլխին կոտրել էք ափսէն։

Մեղադրեալ.—Իսկ դուք պ. դատաւոր ծանօթ էք իմ կնոջ հետ։

Դատաւոր.—Ցանկութիւն չունիմ ծանօթ լինելու։

Մեղադրեալ.—Դէհ որ այդպէս է, ես էլ ցանկութիւն չունիմ, այդ գործի մասին խօսելու։

—

—Ինչպէս էք խորհուրդ տալիս գրիմւելու. պիէսայում ես պէտք է խաղամ «արիկայ»։

Հեղինակը գրգռւած լինելով՝ դերասանի ձայնից ուշքի է գալիս և նայելով նրա դէմքին՝ պատասխանում է.

—Մնացէք այնպէս, ինչպէս որ կաք, ձեր դէմքը յարմար է այդ դերին։

—Իսկ ինչ էք կարծում, պ. Սեդրակ, ձեր հարմնացուն ինձանից էլ հետաքրքիր է։

—Ինչպէս ասեմ ձեզ, նրա տները ձերից մէկ յարկով բարձր են։


ԹԷՅԻ ՀԱՄԱՐ ՊԷՉԻՆԻՅԷ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
ԷՅՆԵՄ.



13—7



Ս. և Ա. ՂՈՒ-



ԿԱՍԵԱՆՆԵՐԻ

## ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սունդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)

Ամեն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ

ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԻ

Ունինք մեծ քանակութեամբ թարթի դօշ, Դօնի և տեղական բալիկ, ճիպա, ցալձուպա, եանի և այլն։

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ

Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ Գները ամենաչափաւոր։

20—14


—Այ տղայ, ինչպէս ծերացել ես, կարծես յիսուն տարեկան լինես։

—Հա, Գէորգ ջան, գլխիս մազերն սպիտակել են։

—Իմ էլ երեսիս մազերը։ Տեսնես պատճառն ինչ է, որ մէկի երեսն է սպիտակում, գլուխը սև մնում, միւսինը հակառակը։

—Պատճառը. սիրելիս, այն մարդը, որ չանչկին է զօռ տալիս, նրա երեսն է շուտ սպիտակում, իսկ այն մարդը, որ գոգուին է զօռ տալիս՝ գլուխը։

Մախլաս

Աստեղը, տեսնելով, որ վիշապը յարձակւում է իր զորանոցի վերայ, բացականչում է, չգիտեմ ինչ անեմ, զորանոցս պաշտեմ վիշապից, թէ վիշապին զորանոցից։

—

—Այդ ինչ է պատահել ձեր աչքի հետ։

—Էհ բարեկամ, դժբաղդութիւն, աչքս օդապարիկ մտաւ։


## Տղամարդկանց դերձակ

### Ն. Ս. ԼԱԶԱՐԵԱՆՑ

(Երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի № 3 հայնանթում)

Ընդունում է տղամարդկանց հագուստի պատւէրներ։

Նոր ստացել է մեծ քանակութեամբ՝ արտասահմանի և Ռուսաստանի ֆիրմաներից սեզոնի կտորներ։

Պատւէրները կատարւում են ճշտութեամբ և բարեխիղճ։

Գները մրցումից դուրս։

4—2



## ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ!!

Պուշկինեան պասաժ № 4—6

### ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ցատուկ դերձակային պիտոյքների.—Տղամարդկանց և կանացի զանազան կոճակների, մետաքսի և բրդի չերիտների, բամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձև անելու չափեր, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան սուտաշներ, փունջեր գայթաններ։ Այդտեղ էլ ընդունւում են պատւէրներ զանազան կտորներից շինւող կոճակների, նոյնպէս ամեն տեսակ վայելչաձև ապրանքների. մշտապէս ստացւում են սեզոնի նորութիւններ։

Խնդրում եմ գնորդներին առանց ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզւել խանութիս մէջ։

Ապրանքների գները նշանակւած են ամենաէժան։

10—9 Մ. Գ. ԲԱԽՉԻՆԵԱՆՑ


—Հիմնւելով ձեռնահմայութեան վերայ, ձեզ կասեմ սիրելի տատիկ, որ մօտիկ ապագայում մեծ ծախսեր պէտք է ունենաս։

—Իսկ ես առանց ձեռնահմայութեան էլ գուշակում եմ, որ հիմայ փող ես խնդրելու ինձանից։

—

—Ես չգիտեմ յարգելի պարոն, թէ դուք ինչու էք նեղանում, քանի որ կտաւի վերայ նկարածը, ոչ թէ դուք էք, այլ ուղտակի էշ…

—Ի հարկէ, դա իմ պատկերս չէ, բայց ես այնուամենայնիւ այնքան յիմար չեմ, որ խելոյն չնկատեմ, թէ այդ ես եմ։

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՎԱՃԱՌԱՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

# Պ. Ս. ԴՕՐՕԺՆՕՎԻ

ՍՈԼՕԼԱԿԻ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ ԳՈՒՐԳԵՆՈՎԻ Հեռախօս № 583

## ԾՆՆԴԵԱՆ ԲԱԶԱՐ, ԱՅԱՒՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

10 օրւայ ընթացքում, այսինքն 12, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22 և 23-ին դեկտեմբերի

ԲՈԼՈՐ ԻՆՆԸ ՄԱՍՆԱՒՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ԱՄԷ՛Ն Ի՛ՆՉ ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱ՛Ն

Քաթանէ ապրանքների
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Տրիկօի գործուածքների
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Բրդեղէն ապրանքների
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Տղամարդկանց սպիտակեղէնի
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Մանուկեղէնի
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Բամբակի գունաւոր գործւած.
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Կանացի սպիտակեղէնի
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Մետաքսէ ապրանքների
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Կահաւորութեան կտորների
ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ
Բոլորը էժան:

Լուսամուտների վիտրինաներում բոլոր բաժանմունքների ապրանքներից ի ցոյց են դրուած նշանակած

ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ.

Էժան վաճառքի օրերում ճաշի համար առեւտուրն ընդհատւում է ցերեկւայ $2^1/_2$ ժամից մինչև 4 ժամը:

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.
Типографія Т-ва „Культура“, Вельяминовская, 18.

## ԽՕԼԵՐԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ



—Ներողութիւն կանէք, գլխաւոր փողոցները միշտ մաքուր ենք պահում, բաւական գումարներ ենք ծախսում
—Բայց ես խալօլնիտելնի լիստ ունիմ, աղքատների տէրը և պաշտպանը ես եմ...

## ՑՐՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԸ



Հնացած հին հոգաբարձութեան, ուսուցչական խումբը պատուեց ընթրիքով